Պատվաստանյութեր

Նորածինների և մանկահասակ երեխաների համար

Նորածինների և մանկահասակ երեխաների համար ավելի մեծ է վտանգը՝ հիվանդանալու պատվաստումների միջոցով կանխարգելվող հիվանդություններով, քանի որ նրանց իմունային համակարգը դեռ լիովին զարգացած չէ: Քանի որ փոքր երեխաները սկսում են ավելի շատ շփվել իրենց շրջապատի և այլ մարդկանց հետ, պատվաստանյութերը կարևոր են լուրջ հիվանդություններից պաշտպանելու և համայնքում՝ ներառյալ ցերեկային խնամքի և վաղ մանկության կրթության կենտրոններում, բռնկումները կանխելու համար:

Պատվաստումները առաջարկվում են Ձեր երեխայի կյանքի տարբեր փուլերում՝ ուշադրությամբ ընտրված ժամանակում պաշտպանելու երեխաներին, երբ նրանք առավել խոցելի են հիվանդությունների նկատմամբ և երբ պատվաստանյութն առաջացնում է երեխայի իմունային համակարգի ամենաուժեղ արձագանքը:

Առաջարկվող բոլոր պատվաստանյութերը մանրակրկիտ ուսումնասիրվել են և անվտանգ են այնպիսի հիվանդությունների կանխարգելման համար, ինչպիսիք են կարմրուկը, խոզուկը և ջրծաղիկը: Դրանք մանրակրկիտ կերպով փորձարկվել են համոզվելու համար, որ ավելի լավ պաշտպանություն են ապահովում ձեր երեխայի համար, քան եթե նա ընդհանրապես պատվաստված չլիներ:

Առավելագույն պաշտպանության համար նորածինները և մանկահասակ երեխաները պետք է ժամանակին ստանան իրենց բոլոր պատվաստանյութերը: Սա հատկապես կարևոր է աշնանը և ձմռանը, երբ երեխաներն իրար հետ ավելի շատ ժամանակ են անցկացնում փակ տարածքներում՝ մեծացնելով շնչառական հիվանդությունների, օրինակ՝ COVID-19-ի և շնչառասինցիտիալ վարակի (RSV) տարածումը:

Ո՞ր պատվաստանյութերով պետք է իմ երեխան պատվաստվի:

Այս պատվաստանյութերը խորհուրդ են տրվում նորածիններին և փոքր երեխաներին, կիրառվում են ծննդից մինչև վեց տարեկանն ընկած ժամանակահատվածում, որպեսզի պաշտպանեն մահվան հավանականություն ունեցող 15 վարակիչ հիվանդություններից.

- **Դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի (DTap) դեմ պատվաստանյութ:** 5 դեղաչափից բաղկացած շարքը խորհուրդ է տրվում սկսած 2 տարեկանից՝ պաշտպանելու համար դիֆթերիայից, փայտացումից և կապույտ հազից, որոնք վտանգավոր են հատկապես նորածինների համար:
- **Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանյութ:** 3 դեղաչափից բաղկացած շարքը խորհուրդ է տրվում սկսած ծննդից՝ պաշտպանելու համար հեպատիտ Բ-ից, որը կարող է առաջացնել ջերմություն, գլխացավ, թուլություն, փսխոց, դեղնախտ և տևական առողջական բարդություններ:

County of Los Angeles Public Health

Պատվաստանյութեր

Նորածինների և մանկահասակ երեխաների համար

- **Պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութ:** Այս 4 դեղաչափից բաղկացած շարքը, եթե տրվի սկսած 2 ամսականից, կարող է կանխարգելել պոլիոմիելիտը՝ հիվանդություն, որն առաջացնում է կոկորդի ցավ, ջերմություն, սրտխառնոց և կաթված:
- **ԿԿԽ (MMR) պատվաստանյութ:** Խորհուրդ է տրվում երկու դեղաչափ, առաջինը՝ 12-15 ամսականում, և երկրորդը՝ 4-6 տարեկանում՝ առավելագույնս պաշտպանելու համար հեշտությամբ փոխանցվող այս հիվանդություններից՝ կարմրուկ, կարմրախտ (գերմանական կարմրուկ) և խոզուկ:
- **Ջրծաղիկի դեմ պատվաստանյութ:** Խորհուրդ է տրվում երկու դեղաչափ, առաջինը՝ 12-15 ամսականում, և երկրորդը՝ 4-6 տարեկանում՝ պաշտպանելու համար ջրծաղիկից, որը կարող է առաջացնել ցան, ջերմություն, վարակված բշտիկներ, գլխուղեղի այտուց և/կամ թոքաբորբ:
- **Գրիպի դեմ պատվաստանյութ:** 6 ամսական և ավելի բարձր տարիքի երեխաների մեծ մասին խորհուրդ է տրվում տարեկան մեկ դեղաչափ: Որոշ երեխաներ կարող են ունենալ երկու դեղաչափի կարիք: Ձեր բժշկական մատակարարը կարող է խորհուրդ տալ լավագույն չափաբաժինը՝ պաշտպանելու ինֆլուենցայից, որը կարող է առաջացնել ջերմություն, մկանային ցավ, ծայրահեղ հոգնածություն և շնչառական վարակ:
- **COVID-19-ի դեմ պատվաստանյութ:** COVID-19-ի դեմ պատվաստանյութը խորհուրդ է տրվում 6 ամսական և ավելի բարձր տարիքի երեխաներին: Առաջարկները կարող են փոխվել նոր պատվաստանյութերի հետ՝ պաշտպանելու ներկայումս շրջանառվող ենթատեսակների ծանր հիվանդություններից: Պատվաստանյութերն ապահովում են պաշտպանություն բազմահամակարգային բորբոքային համախտանիշից (MIS-C)՝ վտանգ, որը կապվում է երեխաների մոտ COVID-19-ի հետ:
- **Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ պատվաստանյութ:** Մինչև 8 ամսական նորածինները պետք է ստանան մեկ դեչաչափ՝ շնչառական սինցիտիալ վիրուսից (RSV) պաշտպանելու լրացուցիչ շերտ ապահովելու համար: Նորածինները և 8-19 ամսական երեխաները, որոնք գտնվում են շնչառական սինցիտիալ վիրուսով վարակվելու մեծ վտանգի տակ և մտնում են շնչառական սինցիտիալ վիրուսի իրենց երկրորդ սեզոնը, նույնպես պետք է ստանան մեկ դեղաչափ:
- **Ռոտավիրուսի (RV) դեմ պատվաստանյութ:** 2-3 դեղաչափից բաղկացած շարքը տրվում է սկսած 2 ամսականից՝ պաշտպանելու համար այս վիրուսից, որը կարող է առաջացնել ծանր փորլուծություն, ջերմություն, փսխոց և ջրազրկում:
- **Հեմոֆիլուս ինֆլուենցա Բ տիպի (Hib) դեմ պատվաստանյութ:** 3-4 դեղաչափից բաղկացած շարք, որը տրվում է սկսած 2 ամսականից և ապահովում է պաշտպանություն բակտերիական վարակից, որը կարող է առաջացնել մենինգիտ, շնչառության ծանր խնդիրներ և թոքաբորբ:

County of Los Angeles Public Health

Պատվաստանյութեր

Նորածինների և մանկահասակ երեխաների համար

- **Պնևմակոկային վարակների դեմ պատվաստանյութ:** 4 դեղաչափից բաղկացած շարք, որը տրվում է սկսած 2 ամսականից և ապահովում է պաշտպանություն բազմաթիվ բակտերիաներից, որոնք կարող են առաջացնել թոքաբորբի վարակ՝ ազդելով թոքերի վրա:
- **Հեպատիտ Ա-ի դեմ պատվաստանյութ:** Տրվում է երկու դեղաչափ 12-ից մինչև 23 ամսականն ընկած ժամանակահատվածում՝ 6 ամիս տարբերությամբ՝ պաշտպանելու համար հեպատիտ Ա-ից: Սա կարող է առաջացնել ջերմություն, ախորժակի կորուստ, դեղնախտ և լյարդի, երիկամների կամ արյան երկարատև խանգարումներ:

Ինչպե՞ս կարող եմ իմ երեխային պատվաստել:

- Խոսեք Ձեր երեխայի մանկաբույժի/հիմնական բժշկական մատակարարի հետ պատվաստումների մասին:
- Եթե չունեք բժշկական ծառայությունների մատակարար, այցելեք http://publichealth.lacounty.gov/vaccines՝ անվճար կամ ցածր արժեքներով պատվաստման կլինիկաների ցանկի և պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկությունների համար:
- Լավագույնն այն է, որ Դուք կարող եք պատվաստումների մեծ մասն անել միևնույն այցի ընթացքում: Դա նշանակում է ավելի քիչ անհարմարություն Ձեր երեխաների համար, և Դուք ավելի քիչ ժամանակ կանցկացնեք այդ գործողությունների վրա:

Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:00-ը՝ շաբաթը յոթ օր: